գուրկ գերդաստանների և մանկանց թիւը, որոնց պահպանութեան և դաստիարակութեան համար չկայ հնար, հէնց այս պայմաններից է առաջ գալիս եւ աղքատ սինլքոր դասը ժողովրդեան, իւր բոլոր թշուառութիւններով: Այստեղ մենք հանդիպում ենք մեր ժամանակի ընկերվարական խնդրին: Այս խնդրի վերաբերութեամբ այստեղ ընդհանրապէս կարելի է ասել միայն այն, որ նորա լուծումն կարելի է գտնել միայն այն ժամանակ, երբ բարեփոխութեամբ հասարակական յարաբերութեանց մասնաւոր անհատներին կտրուի հնարաւորութիւն բարոյական ընտանեկան կենցաղավարութեան, որ անհրաժեշտ է առանց գոյութեան համար անհրաժեշտ միջոցների — երբ կտրուի, ասում ենք, հնարաւորութիւն այդ կեանքի աւելի ընդարձակ ձևով, քան որպիսին կայ այժմ ներկայ հասարակական պայմանների մէջ:

(Կը շարունակուի):

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ Մեծ. Պ. Առաքել Մատուրեանից բաժանորդագրին տասն օրինակ Արարատի ներկայ թուի, որոց չորս օրինակը նուիրում է հետևեալ տեղերին ըստ յանկութեան իւրում. մի օրին. Գրասենեկի ընկերութեան իւրոյ. մի օրին. վանից Տաթևու. մի օրինակ Եկեղ. ծխակ. ուսում. Հայոց Գեորիսու. և մի օրինակ Եկեղ. ծխակ. ուսում. Հայոց ի Փունակոթ:

Իսկ միւս հինգ օրինակը թողել է բարեհայեցողութեան Խմբագրութեանս, որ և ուղարկում ենք հետևեալ տեղերը. Մի օրինակ Հայ Ուսանողաց ի Խարկով. մի օրինակ Հայ Ուսանողաց ի Ղազան. մի օրինակ Հայ Ուսանողաց ի Փարիզ. մի օրինակ Սանտիստեան Օրիորդաց ուսում. ի Վան և մի օրինակ Սոչայի Հայ գաղթականներին:

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ՝Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.